

08.09.2020թ.

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ թիվ 426123/02

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով 08.09.2020 թվականի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 31893 գործը,  
ՊԱՐՉԵՑԻ

«Գ.Ա.Ն.» ՍՊԸ տնօրեն Նաիրա Սողոյանը (ՀՎՀՀ՝ 00467055, հասցե՝ ք Երևան, Ադոնցի 6/1) համաձայն ՀՀ ՊԵԿ Հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչության վարչության կողմից 26.05.2020թ. կազմված թիվ 4121468 ակտի՝ հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացվող դրամական միջոցների հաշվառումը վարել է այնպիսի խախտումով, որը կարող է առաջացնել հարկի նվազեցում:

Նկարագրված արարքի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169՝ հոդվածի 1-ին մասով:

Կողմը՝ պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել: Գործում առկա չէ գրավոր առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Նաիրա Սողոյանը մեկ տարվա ընթացքում չի կատարել իրավախախտում, սույն գործով դիտվում է պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33, 244<sup>2</sup>, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169՝ հոդվածի 1-ին մասի, Նաիրա Սողոյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակելու 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

*(Handwritten signature)*



Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականությունից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40) Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշում հաստատելու հետո երեք օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: Իսկ այդ որոշումը խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվհեմարին. 900005240487՝ վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը: Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքը առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով: Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեն:

Ստացա որոշման պատճենը \_\_\_\_\_